ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 78- Ա **06 մայիսի 2017 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ <<ՍԵՎԱՆԻ ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՏԱՐԱԾՔՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ, 68-րդ հոդվածների և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող մարդկանց կյանքի որակը բարելավելու, արտահիվանդանոցային հոգեբանական, բժշկական և սոցիալական ծրագրերը հոգեկան առողջության շրջանային կաբինետներում իրականացնելու նպատակով թույլատրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի <<Մարտունու բժշկական կենտրոն>>, <<Սևանի բժշկական կենտրոն>>, <<Ճամբարակի առողջության կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություններում և <<Գավառի պոլիկլինիկա>>, <<Վարդենիսի պոլիկլինիկա>> պետական փակ բաժնետիրական ընկերություններում 5 տարի ժամկետով տրամադրել տարածքներ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության <<Սևանի հոգեբուժական հիվանդանոց>> փակ բաժնետիրական ընկերությանը՝ հոգեկան առողջության շրջանային կաբինետների գործունեությունն ապահովելու համար:
2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի <<Մարտունու բժշկական կենտրոն>>, <<Սևանի բժշկական կենտրոն>>, <<Ճամբարակի առողջության կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերությունների և <<Գավառի պոլիկլինիկա>>, <<Վարդենիսի պոլիկլինիկա>> պետական փակ բաժնետիրական ընկերությունների տնօրեններին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության <<Սևանի հոգեբուժական հիվանդանոց>> փակ բաժնետիրական ընկերությանը տարածքներ տրամադրելու համապատասխան փաստաթղթերի ձևակերպումները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ